RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

9 ԱՄԻՍՆԵՐ 2021 թ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2021 թ. 9 ամիսների Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2021 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է **66.3 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **7.7 մլրդ ՀՀ դրամով** կամ **13.2%-ով** ավել է քան 2020 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում գրանցած արդյունքը:



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2021թ. առաջին 9 ամիսների ընթացքում աճել են **300 մլրդ ՀՀ դրամով,** կամ **4.55%**:

- Առ 30.09.2021, ընդհանուր ակտիվները կազմել են **6,887 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկերի ընդհանուր ակտիվները - 30.09.21 և 31.12.20 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Արմսվիսբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **56.2%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, Արդշինբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **43.2%:**
- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **15.7%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 30.09.21



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2021թ. առաջին 9 ամիսների ընթացքում նվազել է **2.9%**-ով:
- Առ 30.09.2021 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **3.927 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **57%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 9 ամիս 2021 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

- Ամենախոշոր **5** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, Կոնվերս Բանկ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **62%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, Արդշինբանկ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **47%:**
- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **16.8%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացում- 30.09.21



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2021թ. 9 ամիսների ընթացքում աճել են **254 մլրդ ՀՀ դրամով,** կամ **4.4%:**

- Առ 30.09.2021, ընդհանուր պարտավորությունները կազմել են **5.960 մլրդ ՀՀ:**



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2021թ. 9 ամիսների ընթացքում աճել են **150 մլրդ ՀՀ դրամով,** կամ **4.2%**:
- Առ 30.09.2021, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **3.721 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **62%:**



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2021թ. 9 ամիսների ընթացքում **6 մլրդ ՀՀ դրամով,** կամ **1.4**%-ով:
- 2021թ. 9 ամիսների ընթացքում, Էվոկաբանկը առաջին անգամ սկսեց պարտամոմսերի թողարկում:
- **17** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **12**-ը:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 30.09.21 և 31.12.20 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2021թ. 9 ամիսների ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **46 մլրդ ՀՀ դրամով**, կամ **5%** ու կազմել **927 մլրդ ՀՀ դրամ**:
- Կանոնադրական կապիտալը (ներառյալ էմիսիոն եկամուտը) աճել է **20.4 մլրդ ՀՀ դրամով** *(ԱԿԲԱ Բանկ – 20 մլրդ ՀՀ դրամ կուտակված շահույթի հաշվին, ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ – 261.4 մլն ՀՀ դրամ և Ամերիաբանկ – 108.4 մլն ՀՀ դրամ)*:
- Վերագնահատման պահուստները նվազել են **19.7 մլրդ ՀՀ դրամ**, կամ **44%**:

Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն - 30.09.21 և 31.12.20 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- Առ 30.09.2021թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **60%**-ը և հավասար է **554 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 30.09.2021թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **37**%-ը և հավասար է **348** մլրդ ՀՀ դրամ:
- Առ 30.09.2021թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **3%**-ը և հավասար են **25 մլրդ ՀՀ դրամ**:

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 30.09.2021



Կուտակված շահույթ (վնաս)

- 2021թ. 9 ամիսների ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **45.6 մլրդ ՀՀ դրամով**, կամ **15%**, կազմելով **348 մլրդ ՀՀ դրամ**:
- 2021թ. 9 ամիսների ընթացքում ԱԿԲԱ բանկ-ը կուտակված շահույթի հաշվին ավելացրել է կանոնադրական կապիտալը շուրջ **20 մլրդ ՀՀ դրամով**:
- Շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել են չորս բանկ՝ ընդհանուր գումարով **11.2 մլն ՀՀ դրամ** (Ինեկոբանկ – *7.5 մլրդ ՀՀ դրամ*, ԱԿԲԱ Բանկ – *2.5 մլրդ ՀՀ դրամ*, ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ – *1.05 մլրդ ՀՀ դրամ* և Արդշինբանկ – *130 մլն ՀՀ դրամ*):



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am